ԿԱՐԾԻՔ

Մարիամ Ժիրայրի Առաքելյանի՝ «Մեդիակոմպետենցիայի ձևավորումը իրավագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում» թեմայով ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Տեղեկատվական դարաշրջանում կրթության ոլորտում կատարվող արմատական փոփոխություններն անմիջականորեն առընչվում են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման և տարածման, ինչպես նաև դրանց՝ բարձրագույն կրթության ոլորտում ներդրման և կիրառման հետ, քանի որ շրջանավարտին ներկայացվող պահանջներով է պայմանավորված տնտեսության ցանկացած ոլորտի առաջընթացը ժամանակակից գլոբալ աշխարհում: Հետևաբար, մասնագիտական կրթական ծրագրերի մեջ նոր կրթական նպատակներ են սահմանվում և դրանց համար մշակվում սովորողների կրթական վերջնարդյունքները ձևավորող նորանոր ռազմավարություններ, փորձարկվում նոր մեթոդներ և գործիքներ՝ դրանց արդյունավետ ձևավորման նպատակով:

ՏՀՏ գործիքների կիրառման և մեդիագրագիտության վերաբերյալ հատկապես վերջին երկու տասնամյակների ընթացքում բավականին շատ ուսումնասիրություններ են կատարվել, այնուամենայնիվ, տեխնոլոգիաների այսչափ տարածումը կրթության մեջ ամենևին էլ չի նշանակում, որ այն սկսել է զարգանալ միշտ ճիշտ ուղղությամբ, և մեր համոզմամբ, այն դեռ կարգավորման կարիք ունի կրթության բոլոր մակարդակներում՝ տարբեր մասնագիտությունների շրջանակներում:

Օտար լեզուների դասավանդման մեթոդաբանության զարգացման միտումներն էլ չափազանց արագ են, և մեդիակրթությունը նորանոր պահանջներ է ձևավորում նաև մեդիագրագետ անհատի թղթապանակին՝ այն անընդհատ համալրման, նոր արդյունավետ գործիքների մշակման, ներդրման և կիրառման առումով: Բարձրագույն կրթության մասնագիտական ծրագրերում տեղեկատվական

տեխնոլոգիաները բազմաթիվ գործառույթներ են իրականացնում՝ ելնելով կրթական ծրագրերի նպատակներից և խնդիրներից, կրթական վերջարդյունքներից և արտաքին և ներքին շուկայի կողմից՝ այդ ոլորտի շրջանավարտին ներկայացվող պահանջներից:

Սրընթաց զարգացումը գլոբալ աշխարհում պահանջում է ոչ միայն մեդիագրագիտությունն օգտագործել որպես ընդհանրական կոմպետենցիա՝ լրատվամիջոցների կողմից տարածվող տեղեկատվությունը գնահատելու համար, այլև, ինչպես Մարշալ Մակլյուենն է նշում՝ օգտագործել այդ գործիքը հաղորդակցման բոլոր ձևերում և դիտարկել այն որպես մարդու, մշակույթի ու հասարակության ձևավորման միջոց: Իսկ այժմ, երբ աշխարհն ալեկոծված է Covid-19-ով, այն լավ առիթ ու մեծածավալ հարավորություն է ընձեռում առցանց կրթության պայմաններում ընդլայնելու մեդիակոմպետենցիաների զարգացումը տարբեր դասընթացների, այդ թվում՝ անգլերենի դասընթացի շրջանակում բարձրագույն դպրոցում: Օրեցօր մեդիագրագիտությունը դառնում է առավել քան արդիական, իսկ մեդիկոմպետենտ անհատ լինելը՝ բոլոր մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ նախապայման:

Մարիամ Ժիրայրի Առաքելյանի թեկնածուական ատենախոսությունը կարևոր գիտահետազոտական աշխատություն է, որի միջոցով հեղինակը փորձում է քննարկել իրավագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում համացանցային ռեսուրսների, մեդիամշակույթի և մեդիագրագիտության տեխնոլոգիաների կիրառման հետ կապված խնդիրները, մեդիակոմպետենցիայի ձևավորման մեթոդական համակարգի մշակման առանձնահատկությունները, ընթերցանության ուսուցման մոդելի հիմքում ընկած սկզբունքները, մեդիատեքստերի ընթերցանության կարողությունների զարգացմանն ուղղված ռազմավարությունները:

Ատենախոսության նպատակն է՝ մշակել բուհերում իրավագիտական ֆակուլտետների ուսանողների մեդիակոմպետենցիայի ձևավորմանը և անգլերենով ընթերցանության կարողությունների զարգացմանը միտված մեթոդիկա, օբյեկտը՝ ապահովել մեդիակրթության զարգացումն ուսումնական հաստատություններում, իսկ առարկան՝ մշակել և ներդնել իրավագիտական մեդիատեքստերի ընթերցանության կարողությունների զարգացումն ապահովող մեթոդական

համակարգ: Փաստորեն, եթե ավելի պարզունակ ձևով ձևակերպենք Մարիամ Առաքելյանի խնդրո առարկան՝ զարգացնել մասնագիտական հաղորդակցական կոմպետենցիաները՝ անգլերենը որպես օտար լեզու դասավանդման շրջանակում՝ կիրառելով տարաբնույթ ՏՀՏ գործիքներ ընթերցանության կարողություններ ձևավորելու նպատակով:

Ատենախոսության հեղինակն աշխատանքում շարադրում է հետազոտության գիտական վարկածը, որի կետերից մեկի հետ թեև ես մասամբ եմ համաձայն, քանի որ ընթերցանության գործընթացի ավելի արդյունավետ իրականացման սկզբունքներ չեմ կարող համարել միայն տեղեկատվայնացումը և մեդիականացումը, քանի որ համարում եմ դրանք բազմաթիվ սկզբունքներից երկուսը՝ միանձնային, միջմշակութային, հաղորդակցական, գործընթացային կարողությունների հարացույցում, այնուամենայնիվ, հստակ են ձևակերպվել խնդիրները, որոնք ենթադրում են հետազոտական գործընթացի մի ամբողջ շրջափուլի իրագործում՝ իրավիճակի վերլուծությունից, ուսանողների մեդիակոմպետենցիաների մակարդակի հայտորոշումից մինչև ընթերցանության կարողությունների զարգացման նպատակով ռազմավարությունների մշակում և մշակված մեթոդական համակարգի փորձարկում և դրա արդյունավետության աստիճանի որոշում ՀՀ ոստիկանության ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետում:

Մարիամ Առաքելյանի ատենախոսության գիտական նորույթը ևս արժանի է ուշադրության, քանի որ հեղինակը՝ տեսականորեն հիմնավորված և գործնականում փորձարկված մեթոդական համակարգ է առաջարկում, որի հիման վրա կարելի է կառուցել դասընթացի ծրագիր, մշակել վարժությունների և առաջադրանքների համակարգ՝ օտար լեզուն մեդիատեխնոլոգիաների միջոցով դասավանդելու և ուսանողների ընթերցանության կարողությունները ձևավորելու նպատակով:

Սույն աշխատանքն ունի նաև էական տեսական նշանակություն անգլերենի դասավանդման և ուսուցման համակարգի բարելավման առումով, քանի որ հեղինակը փորձարարական թեստավորման համակարգի միջոցով ստուգում է սովորողների մեդիակոմպետենտության ձևավորվածության աստիճանը, նրանց համապատասխան մասնագիտական տեքստերի որոնողական հմտությունները

մասնագիտական տարբեր թեմաների շուրջ, նրանց կարողությունները՝ օգտվելու առցանց ընթերցարաններից:

Մարիամ Առաքելյանի թեկնածուական ատենախոսությունն ունի կարևոր գործնական նշանակություն, քանի որ մշակված նյութերը հետագայում կարող են կիրառվել այլ դասախոսների կողմից՝ ՀՀ տարբեր բուհերի իրավագիտության ֆակուլտետների ուսանողներին անգլերեն դասավանդելու ընթացքում:

Հեղինակը՝ իր առջև դրված նպատակին հասնելու և խնդիրները լուծելու համար կիրառում է մեթոդների համալիր մի խումբ, որը հնարավորություն է տալիս տեսականորեն զննել, ուսումնասիրել, էմպիրիկ ձևով թեստավորել, անկետավորել և փորձարկել, ինչպես նաև վիճակագրական մեթոդի օգնությամբ հաշվել և վերլուծել փորձարկման և թեստավորումների արդյունքները:

Պաշտպանության ներկայացվող դրույթները ևս ճիշտ են ընտրված և ձևակերպված՝ ոչ միայն ելնելով թեմայի յուրահատկությունից, այլև կրթության, այդ թվում լեզվակրթության շարունակականության պահանջներից:

Մարիամ Ժիրայրի Առաքելյանի ատենախոսության կառուցվածքը համապատասխանում է հետազոտական նպատակներին, այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից և գրականության ցանկից, որը ներառում է շուրջ 106 անուն գրականություն, այդ թվում՝ 43 անուն անգլալեզու գրականություն՝ մեդիակրթության դասավանդման, մեդիատեղեկատվության, ուսանողակենտրոն ուսուցման, սոցիալական մեդիագրագիտության և այլ կարևոր հարցերի վերաբերյալ, որոնց շնորհիվ հեղինակին հաջողվել է համակողմանիորեն քննել խնդիրները և արժեքավոր եզրահանգումներ կատարել, և հինգ հավելվածից:

Առաջին գլխում «Լեզվակրթության քաղաքականության ժամանակակից միտումները» վերնագրով, քննարկվում է մուլտիմեդիական տեխնոլոգիաների օգտագործման առկա վիճակն իրավագիտական կողմնորոշմամբ դասընթացներում:

Ատենախոսը բավականին լավ ուսումնասիրություն է ներկայացրել այս հատվածում, որը, թեև փաստում է, որ ընտրված 8 բուհերում՝ 4 Երևանի և 4 մարզային՝ անգլերենի դասավանդման մեջ մեդիագործիքների կիրառությունն այնքան էլ արդյունավետ չէ, «... ուսանողական հարցումը ցույց է տվել, որ

իրավագիտական անգլերենի որոշ դասընթացներում (20%) ոչ մի մուլտիմեդիական տեխնոլոգիա չի օգտագործվում/էջ 17/): *Հարցին, թե «Ձեզ տրվո՞ւմ են տնային հանձնարարություններ, որոնց կատարման համար անհրաժեշտ է օգտվել համացանցից» հարցման մասնակիցների 67.5%-ը տվել է դրական պատասխան, սակայն շուրջ մեկ երրորդը՝ բացասական, իսկ 5%-ը նշել է, որ նման աշխատանքները կրում են հազվադեպ բնույթ...»,* այնուամենայնիվ հեղինակը նաև նշում է, որ *«...սակայն սովորողների մոտ չի ձևավորվում համապատասխան մեդիակոմպետենցիա՝ բազմազան մեդիատեքստերի հետ ինքնուրույն առնչվելու կարողություն: Մինչդեռ արդի հարափոփոխ աշխարհում տեղեկացված և ազատ կողմնորոշվող անհատ դաստիարակելու գործում հսկայական դեր ունի մեդիակոմպետենցիայի ձևավորումը /էջ 21-22/»:* Նշված բացթողումները լրջագույն բացթողումներ են ՀՀ բուհերի կողմից՝ ժամանակակից կրթական գործընթացների զարգացման պայմաններում՝ ուսանողների մեդիակոմպետենցիան օտար լեզվի ուսուցման գործընթացում ձևավորելու և լեզվաիմացության մակարդակը բարձրացնելու առումով:

Ատենախոսի՝ այս գլխում կատարած հարցումների արդյունքներն առաջարկում եմ դարձնել քննարկման առարկա հարցմանը մասնակցած բուհերի համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների և անգլերենի դասախոսների համար:

Նույն գլխի 2-րդից 5-րդ ենթագլուխներում քննարկվում են մուլտիմեդիայի դիդակտիկական ներուժի, մեդիակրթության անհրաժեշտության, տեղեկատվական աղբյուրներից օգտվելու հետ կապված խնդիրները:

Ատենախոսության երկրորդ գլխում, վերնագրված՝ **«Ուսանողների մեդիակոմպետենցիայի ձևավորման դժվարությունները անգլերենի իրավագիտական կողնորոշման դասընթացում», քննարկվում են մեդիատեքստերի էության բացահայտման ժամանակակից մոտեցումները,** մանրամասնորեն նկարագրվում է ուսանողների թեստավորման մեթոդաբանությունը՝ որոշելու ուսանողների մեդիակոմպետենցիայի մակարդակը, բացահայտելու իրավագիտական մեդիատեքստերի բովանդակությունը հասկանալու համար

անհրաժեշտ լեզվական իրազեկության մակարդակը (մասնագիտական բառապաշարի, քերականական կառուցվածքների իմացություն և այլն) և սահմանելու իրավագիտական տեքստերի բովանդակության ընկալման դժվարությունները: Թեստավորումը չափազանց կարևոր գործիք է՝ հեղինակի առջև դրված խնդիրները վերլուծելու համար, սակայն, ինչպես Մարիամ Առաքելյանը նշում է, թեստավորումն իրականացվել է 2017 թվականին, և հավանաբար շատ հարցեր կարող էին այլ մեկնաբանություններ ունենալ այս պահի իրավիճակը վերլուծելու դեպքում: Որպես բարձրագույն կրթության ոլորտի ներկայացուցիչ, տեղյակ եմ, որ պաշտպանությունները վերջին տարիներին ձգձգվել են մասնագիտական խորհուրդների վերաձևավորումների հետևանքով, այնուհետև կորոնավիրուսային համավարակի և պատերազմի գործոնները ևս նպաստել են գործընթացների դանդաղեցմանը, սակայն լավ կլիներ, որ մասնագիտական խորհուրդներն առաջնահերթություն տան հատկապես այն ատենախոսներին, որոնք էմպիրիկ հետազոտություն են կատարում, որոնց արդյունքներն ավելի արժեքավոր կլինեն այդ պահին ներկայացնելու և հանրայնացնելու դեպքում;

Երրորդ գլխում՝ վերտառված «Մեդիակոմպետենցիայի ձևավորման մեթոդական համակարգի մշակում», հեղինակը ներկայացնում է ընթերցանության ուսուցման մոդելի հիմքում ընկած սկզբունքները, մուլտիմեդիական միջոցների կիրառմամբ անգլերենի ընթերցանության ուսուցման մոդելի մշակման մեթոդաբանական հիմքերը և ռազմավարությունները՝ ուղղված մեդիատեքստերի ընթերցանության կարողությունների զարգացմանը, ինչպես նաև այս գլխում ատենախոսի կողմից ներկայացվում են մշակված մեթոդական համակարգի փորձարկումը և արդյունքների վերլուծությունը:

Աշխատանքում ուշագրավ են առաջին և երկրորդ փորձարարական փուլերի արդյունքները, որոնք լիարժեքորեն հաստատում են հեղինակի կողմից առաջադրված գիտական վարկածի հավաստիությունը: Հեղինակը, փաստորեն կիրառում է տվյալագիտության տարրեր՝ հիմնավոր եզրահանգումներ կատարելու նպատակով: Կարծում եմ, հետագայում ատենախոսը կարող է այս ուսումնասիրություններն ընդլայնել այլ մասնագիտական կրթական ծրագրերով, այդ թվում ճշգրիտ

գիտությունների մասնագիտական կրթական ծրագրերով սովորող ուսանողների մեդիակոմպետենցիայի և ընթերցանության կարողությունների մակարդակը որոշելու դրանց միջոցով, ինչպես նաև նոր առաջարկություններ անել՝ ոլորտի բարելավման ուղղությամբ:

Աշխատանքի ամենաէական արժեքը՝ մուլտիմեդիական միջոցների կիրառմամբ անգլերենի ընթերցանության ուսուցման մոդելի մշակման մեթոդաբանական հիմքերի ձևավորումն է, որոնց շնորհիվ քննվում են ընթերցանության ուսուցման առանձնահատկությունները, մեդիառեսուրսների գնահատման, լեզվական ընկալման, տեքստի բովանդակության ընդհանուր ըմբռնման և այդ կարողությունների ձևավորման համար ընտրված ռազմավարությունները և վարժությունները:

Ատենախոսության եզրահանգումները լիովին արտացոլում են կատարված արժեքավոր ուսումնասիրության ամփոփ արդյունքները. ատենախոսը ներկայացրել է անգլերենի դասընթացում ընթերցանության կարողությունների՝ նոր հնարներով և տեխնոլոգիաներով զարգացման համակարգը, որն արդյունավետորեն կնպաստի ընթերցանության տարբեր բաղադրիչների յուրացմանը, ինչպես նաև մեդիագրագիտության և մասնագիտական մեդիատեքստերից ինքնուրույն կերպով տեղեկություն ստանալու կարողության զարգացմանը:

Ատենախոսրության արդյունքները լայն հնարավորություններ կընձեռեն ուսումնական գործընթացում մեդիագրագիտության և ուսանողների ստեղծագործական, լեզվական, լեզվահաղորդակցական և միջմշակութային կարողությունների զարգացմանը:

Ատենախոսության թեմայի շուրջ տպագրված բոլոր վեց հոդվածներն արտացոլում են հետազոտության դրույթները:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը, նկարագրում է աշխատանքի փուլերը և կուռ ձևով ներկայացնում աշխատանքի հիմնական արդյունքները:

Բացի ընթացքում արդեն ներկայացված առաջարկություններից՝ կցանկանայի ատենախոսի ուշադրությունը սևեռել մի քանի դիտարկումների վրա.

1. Մարիամ Առաքելյանն ատենախոսության մեջ կիրառում է «մեդիագրագիտություն» եզրը, որը վերաբերվում է բոլոր մեդիամիջոցների ներգրավմանն ուսումնական գործընթացում, մինչդեռ աշխատանքի մեջ խոսում է առցանց մեդիատեքստերի կիրառման, և դրանց հիման վրա անգլերենի դասընթացում ուսանողների ընթերցանության կարողությունները ձևավորելու մասին:
2. Ժամանակակից մեդիակրթության մեջ կան նաև այլ մոդելներ, որոնք կարելի է կիրառել նաև օտար լեզվի դասավանդման գործընթացում, մասնավորապես, մեդիակրթական մոդելը/ Լեգոտինա Ն.Ա., 2004/, Медиаобразовательная модель Н.А.Леготиной [Леготина, 2004], Լ. Մասթերմանի մեդիակրթական մոդելը Masterman, 1985; 1997/, Սիլվըբլեթի մեդիակրթական մոդելը /Silverblatt, 2001/, Բեզըլգեթի կրթական մոդելը /Bazalgette, 1989; 1995/, Հարթի մեդիակրթական մոդելը /Hart, 1991, 1998/, կանադական մեդիակրթական մոդելը/ [Andersen, Duncan & Pungente, 1999, , Worsnop, 1999, [Rother, 2002 W.J.Potter, 2001/, որոնք նույնպես հիմնված են քննադատական մտածելակերպի զարգացման տեսության, սոցիոմշակութային, նշանագիտական, մշակութաբանական տեսությունների տարրերի լայն ներդրման և կիրառման վրա:
3. Հեղինակը կարող էր նաև անդրադառնալ մեդիակոմպետենտ անհատի խթանող մակարդակներին՝ ստորին, միջին և բարձր, կոնտակտային ցուցանիշի մակարդակներին, տեղեկատվական և ընկալողական ցուցանիշների մակարդակներին, որոնք անմիջականորեն կապ ունեն ընթերցանության կարողությունների ձևավորման հետ, որոնք թույլ կտային գնահատել ուսանողի կարողության ձևավորման արդյունքն ըստ մակարդակների: Այսինքն, ոչ միայն կարելի էր խոսել այդ կարողության մասին, այլև այդ կարողության չափելիության և ուսանողների գիտելիքները, կարողությունները և հմտությունները գնահատելու մասին: Մի գուցե, ատենախոսը՝ հետաքրքրության դեպքում, ցանկություն կունենա իր հետագա ուսումնասիրությունները կատարել հենց այս ուղղությամբ, որտեղ զգալիորեն նկատվում է տեսական և կիրառական մոտեցումների արդյունավետ

կիրառման բաց, որը հնարավոր է լրացնել հետագա ուսումնասիրությունների միջոցով:

Չնայած ներկայացված դիտարկումներին ատենախոսության որոշ հարցերի վերաբերյալ, դրանք ամենևին էլ չեն նսեմացնում աշխատանքի գիտական և կիրառական արժեքը, և հիմնվելով վերոգրյալի վրա՝ երաշխավորում եմ, որ Մարիամ Ժիրայրի Առաքելյանի՝ «Մեդիակոմպետենցիայի ձևավորումը իրավագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը բավարարում է «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին վերաբերող ՀՀ ԲՈԿ-ի պահանջները, իսկ նրա հեղինակն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԳ.00.02 «Դասավանման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ:

Հյուսիսային համալսարանի ուսումնահետազոտական
և միջազգայնացման գծով պրոռեկտոր,
Եվրասիա միջազգային համալսարանի օտար լեզուների
և գրականության ամբիոնի պրոֆեսոր,
բ.գ.դ., պրոֆեսոր Լուսինե Հրանտի Ֆլջյան

Հաստատում եմ՝

Հյուսիսային համալսարանի գիտ. քարտուղար Գայանե Հակոբյան